ՀՏԴ : 947.25+949.502+281.6
DOI: 10.54503/0135-0536-2026.2-38

ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԴՐՎԱԳԻ ՇՈՒՐՋ
(X դարի առաջին քառորդ)*

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ հայ-բյուզանդական հարաբերություններ, Աշոտ Երկաթ, եկեղեցիների միություն, դավանանք, Հովհաննես Դրասխանակերտցի, Նիկողայոս Միստիկոս, Կոստանդնուպոլսի պատրիարք:

Ամփոփում

Հայ-բյուզանդական հարաբերություններում եկեղեցադավանաբանական խնդիրները, դրանց վերաբերյալ քննարկումներն ու հայ-բյուզանդական եկեղեցական միությանը միտված ծրագրերը կարևոր և ազդեցիկ տեղ են զբաղեցնում: Հայաստանի և Բյուզանդիայի միջև գրեթե միշտ եկեղեցադավանաբանական խնդիրները ձևավորել են բարդ իրավիճակներ ու թելադրել ուրույն զարգացումներ: Այս առումով Հայոց թագավորության վերահաստատումը Հայաստանում IX դարի վերջին հայ-բյուզանդական հարաբերություններում նոր դարաշրջանի սկիզբ եղավ: Բյուզանդիայում գրեթե միաժամանակ փոխվել էր կայսերական հարստություն (867 թվականից), որը սկսել էր վարել կայսրության վաղեմի հզորությունը վերականգնելու քաղաքականություն: Այդ ճանապարհին վերջինիս քաղաքականության մեջ կարևորվում էր Հայոց թագավորության դերը Արևելքում, ուստի նրա հետ կապերը սերտացնելու և դրանց նոր որակ հաղորդելու նպատակով Բյուզանդիան կրկին անդրադարձավ եկեղեցիների միության վաղուց փայփայած ծրագրին: Առավել ևս, որ նորակազմ Հայոց թագավորությունը Բագրատունիների գլխավորությամբ IX դարի վերջին և X դարի սկզբին հաճախ էր դիմում կայսրության օգնությանը:

Նախաբան

Բագրատունի առաջին երկու թագավորների՝ Աշոտ I-ի (887–891) և Սմբատ I-ի (891–914) օրոք հայ-բյուզանդական հարաբերություններն ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես դաշնակցային: Հարաբերությունների նման բնույթը երկուստեք կարևոր էր. Բյուզանդիան Արևելքում կարիք ուներ հզոր դաշնակցի,

* Ներկայացվել է 26. V. 2026 թ., գրախոսվել է 27. V. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

ինչպիսին կարող էր լինել Հայոց թագավորությունը, իսկ վերջինս կայսրության աջակցության կարիքն ուներ արտաքին վտանգներին արդյունավետ դիմակայելու համար: Դեպքերի ընթացքը ցույց է տալիս, որ Բյուզանդիան նման պայմաններում միշտ էլ առաջ էր քաշում հայկական և բյուզանդական եկեղեցիների միության պահանջը:

Դեռ նախքան Աշոտ I Բագրատունու թագադրությունը Բյուզանդիան ակտիվացրեց եկեղեցադավանաբանական խնդիրների քննարկումը հայկական կողմի հետ՝ առաջ քաշելով եկեղեցիների միության հարցը[1]: Այդ պատմափուլում Աշոտ Բագրատունին մեծապես կարևորում էր Բյուզանդիայի դերը Հայոց թագավորության վերականգնման գործում, ինչի պատճառով իր հետ նամակագրության մեջ մտած Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտիուսին (858–867, 877–886), որի հայտարարած նպատակը հայ-բյուզանդական եկեղեցական միության կամ հավատո միաբանության հաստատումն էր[2], նա որևէ կտրուկ պատասխան չտվեց, թեև, ի վերջո, պատրիարքի ջանքերն ավարտվեցին անարդյունք:

Սմբատ I-ի գահակալության շրջանում եկեղեցադավանաբանական հիմնահարցերի քննարկումներ տեղի չեն ունեցել, ավելին՝ հայ-բյուզանդական հարաբերություններում դաշինքը պահպանվել է, չնայած վերջինս ի զորու չեղավ կանխել Սմբատ I-ի եղերական վախճանը[3]:

Հայ-բյուզանդական եկեղեցական միության հարցը խիստ հրատապ դարձավ Աշոտ II Բագրատունու (այսուհետև՝ Աշոտ Երկաթ) գահակալության շրջանում:

Հայ-բյուզանդական եկեղեցադավանաբանական հարցերը Աշոտ Երկաթի (914–929) գահակալության առաջին տարիներին

Բյուզանդիան հայ-բյուզանդական եկեղեցադավանաբանական խնդիրների լուծմանը կրկին անդրադարձավ Կոստանդնուպոլսի Նիկողայոս Միստիկոս պատրիարքի աթոռակալության (901–907, 912–925) երկրորդ շրջանում, երբ Աշոտ Երկաթը, Հայոց թագավորությունը կործանումից փրկելու և արտաքին թշնամիների դեմ պայքարելու նպատակով, ապավինեց Բյուզանդիային՝ երկու անգամ լինելով Կոստանդնուպոլսում:

Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ Աշոտ Երկաթն առաջին անգամ Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս է այցելել Լևոն VI կայսեր օրոք (886–912)[4], ամենայն հավանականությամբ, 910 թ. Ատրպատականի ամիրա Յուսուֆի (901-927) զորքի դեմ Ձկնավաճառի ճակատամարտում հայոց բանակի պարտությունից հետո[5]: Ցավոք, այդ այցելության մասին մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել, բացի այն, որ նա «բազում գործս արութեան ցուցեալ ի Կոստանդնուպոլիս եւ յաշխարհն Յունաց»: Այնուհետև նա հայրենիք է վերադարձել կայսր Լևոն VI-ի «հրամանով»[6], այսինքն՝ ամենաուշը 912 թ.:

---

[1] Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց. 1968, № 1–3, 65–100, № 4–6, 129–156:

[2] Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք. 1968, № 7–9, 257–258, Ա ն ա ն ե ա ն. 1988, № 1–4, 10:

[3] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 502:

[4] Տ ա ր ա ւ ն ե ց ի. 2010, 748:

[5] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 493, Տ ա ր ա ւ ն ե ց ի. 2010, 745:

[6] Տ ա ր ա ւ ն ե ց ի. 2010, 748:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

Փոխարենը, մանրամասն և ուշագրավ են նրա երկրորդ՝ 915 թ. ուղևորության մասին տեղեկությունները: Հայոց թագավորը, ելնելով իր տերության տարբեր հատվածներում տեղի ունեցող ներքին խժդժություններից և թշնամիների գործողություններից, մեկնում է Կոստանդնուպոլիս՝ օգնություն հայցելու[7]: Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898-925), որ այդ ժամանակ գտնվում էր Տարոնում, չի մեկնում Կոստանդնուպոլիս, քանի որ մտահոգված էր, թե իրեն կմեղադրեն քաղկեդոնականությանը հարելու համար[8]: Դա բանալի տեղեկություն է այն մասին, որ այնտեղ օգնության դիմած Աշոտ Երկաթից Հայոց եկեղեցու դավանանքին առնչվող ինչ-որ բան են պահանջել:

Աշոտ Երկաթը Հայաստան վերադարձավ 916 թ. բյուզանդական օգնական զորքով՝ կայսեր կողմից ճանաչված որպես տարածաշրջանի բոլոր քրիստոնյա տիրակալների ու իշխանների գահերեց: Նրան այնտեղ շատ ջերմ էին ընդունել, պատվել ու մեծարել[9]: Սակայն դա չէր արվել հենց այնպես, այլ, անկասկած, եկեղեցադավանաբանական հարցերում որոշակի խոստումներ կորզելու նպատակով: Տեղին է հիշելը, որ, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Աշոտի թագադրությունը դեռևս 914 թ. կազմակերպել էր Վրաց թագավոր Ատրներսեհը՝ առանց Հայոց կաթողիկոսի մասնակցության[10]: Քաղկեդոնական տիրակալի կողմից Հայոց գահաժառանգի թագադրության կազմակերպումը կարող էր լինել այն հիմնական իրողություններից մեկը, որը Բյուզանդիային հույս էր ներշնչել, որ Հայոց եկեղեցին վերջապես կմիավորվի բյուզանդականին: Ի դեպ, կարելի է ենթադրել, որ հենց Աշոտն էր իր քայլերով Բյուզանդիային նման հույս ներշնչում՝ նրա օգնությունը ստանալու ակնկալիքով:

Նիկողայոս Միստիկոսի նամակը Աշոտ Երկաթին. բովանդակային ու ժամանակագրական դիտարկումներ

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը, որ մահացել է 925 թ. մայիսին, մի քանի գրություն է ուղարկել Հայոց կաթողիկոսին և թագավորին, որոնք մեծապես բացահայտում են հայ-բյուզանդական եկեղեցադավանաբանական հարցերի էությունը:

Աշոտ Երկաթի՝ 915 թ. Կոստանդնուպոլիս այցի արդյունքում ձևավորված հայ-բյուզանդական դաշինքի և եկեղեցաքաղաքական հարաբերությունների հետ կապված զարգացումների մեջ հստակություն մտցնելու առումով կարևորվում են Նիկողայոս Միստիկոսի՝ հունարենով պահպանված երկու նամակները: Դրանց գրության ժամանակի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Նամակներից առաջինը, որի հասցեատերեր են համարվել Հայոց թագավոր Աշոտ Երկաթը և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, իսկ գրության ժամանակ՝ 922 թվականը[11], իրականում գրվել է, դատելով տեքստից, միայն Հայոց կաթողիկոսին և, ամենայն հավանականությամբ, 915 թ., երբ Աշոտ Երկաթ թագավորը

[7] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 516:
[8] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 533–534:
[9] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 533, 537–538:
[10] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 509, 525:
[11] J e n k i n s. 1961, V. 31, № 1, 75–80.

մեկնել էր Բյուզանդիա և գտնվում էր Կոստանդնուպոլսում[12]: Նամակում պատրիարքը հասցեատիրոջը՝ Հովհաննես Դրասխանակերտցուն, գրում է, որ կայսրը նրա համար բարեգործություն է արել, և հույս հայտնում, որ նա լավագույնս հասկանում է այդ և այն, որ պարտավոր է ծառայություններով փոխհատուցել կայսրին: Պատրիարքը հավելում է, որ փոխհատուցման դեպքում պատրիարքն ինքն էլ իրեն բավարարված կզգա, որ դարձել է նման երախտագետ մարդու միջնորդը: Կայսեր արած բարեգործության առումով պարզվում է, որ Հայոց կաթողիկոսը նախապես խնդրել էր պատրիարքին, որ նա միջնորդի կայսեր առաջ՝ «հաստատում և պատիվ» տալու Հայոց գահաժառանգին, որին, ըստ նամակագրի, վիճակված էր Հայոց իշխանությունը: Պատրիարքը հայտնում էր կաթողիկոսին, որ կայսրն ականջալուր է եղել նրա խնդրանքին: Պարզ է, որ նամակը գրված է միայն մեկ անձի, ով խնդրել է Հայոց գահաժառանգի համար, այսինքն, անկասկած, Հայոց կաթողիկոսին: Պատրիարքը այնուհետև գրում է, որ կայսրը, ի պատասխան իր բարեգործության, ակնկալում է, որ նրանք երկուսն էլ՝ կաթողիկոսն ու գահաժառանգը, կատարեն իր կամքը, համամիտ ու հավատարիմ լինեն իրեն և դառնան նրա իսկական բարեկամը[13]: Հայոց կաթողիկոսին պատրիարքը «Ձերդ կատարելություն» է կոչում և որպես նվեր պատմուճան ուղարկում[14]: Իսկ նա, որին վիճակված էր Հայոց իշխանությունը և որին կայսրը հաստատել էր իր կարգավիճակում ու շնորհել վերոհիշյալ «պատիվը», ոչ այլ մեկն է, եթե ոչ Աշոտ Երկաթ թագավորը, որը 915–916 թթ. եղել էր Կոստանդնուպոլսում, հանդիպել կայսրին և, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, մեծ պատիվների արժանացել այնտեղ և ճանաչվել գահերեց[15]: Պատրիարքն այդ մասին էլ հենց տեղեկացնում էր կաթողիկոսին:

Փաստորեն, պատրիարքի նամակը լի է կայսեր և իր արածի դիմաց փոխհատուցում ու ծառայություններ ստանալու սպասումով: Պատրիարքը շեշտադրում է կայսրությանը հավատարիմ բարեկամ լինելու պայմանը, որն ի ցույց է դնում նրա՝ հետագայում Հայոց կաթողիկոսին որոշակի պահանջներով դիմելու ակնկալիքը:

Պատրիարքի երկրորդ նամակը կապված է Արևելքում փոփոխվող իրավիճակի հետ: Ժամանակն անցնում էր, իսկ Հայոց թագավորության կայունացած վիճակը դարձյալ գրգռում էր նրա հակառակորդներին: 922 թվականից սկսած Ատրպատականի ամիրա Յուսուֆը վերսկսեց արշավանքները Հայաստան, որը դարձյալ հայտնվեց ծանր վիճակում[16]: Եվ ահա հունարեն բնագրով պահպանված մեկ այլ նամակից պարզ է դառնում, որ Նիկողայոս Միստիկոսը շարունակում էր հետաքրքրվել Հայաստանի գործերով: Նամակից, որը գրված էր «իշխանաց իշխանին», այսինքն՝ Աշոտ Երկաթ թագավորին[17], պարզվում է, որ մահացել էր Հայոց կաթողիկոսը, իսկ Հայոց թագավորը բանագնացներ էր ուղարկել Կոստանդնուպոլիս՝ այդ մասին տեղեկացնելու: Ըստ պատրիարքի՝ Աշոտ Երկաթի ներկայացուցիչները Կոստանդնուպոլսում հայտնել են, որ նա՝ որպես կայսեր

[12] Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, № 4, 252, Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2016, 44:

[13] N i c o l a i. 1863, 310; N i c h o l a s I P a t r i a r c h. 1973, 371–373.

[14] N i c h o l a s I P a t r i a r c h. 1973, 371–373.

[15] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 533:

[16] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 576–581:

[17] Բյուզանդական արքունիքը այդպես էր անվանում Բագրատունի արքաներին. տե՛ս C o n s t a n t i n e P o r p h y r o g e n i t u s. 1967, 191, 195, 199.

անկեղծ և նրա հետ ամեն ինչում համաձայնել ջանացող բարեկամ, ցանկանում է, որ նոր կաթողիկոսը ձեռնադրվի Կոստանդնուպոլսում: Պատրիարքը Հայոց թագավորին ուղղված նամակում ակնարկում է, որ կայսեր հետ համաձայնելու պարագայում կարժանանա նրա բարերարությանը, ինչպես նախկինում, երբ իմաստնություն դրսևորելով՝ շատ բարերարությունների է արժանացել: Նա գովում է Հայոց թագավորի՝ կայսեր հետ բոլոր հարցերում համամիտ լինելու որոշումը: Կարելի է եզրակացնել, որ Աշոտ Երկաթի որոշումը բխում էր կայսեր պահանջներին համաձայնելու արդյունքում նրա բարերարությանն արժանանալու անհրաժեշտությունից: Այս դեպքում, ամենայն հավանականությամբ, կայսեր պահանջը Հայոց նոր կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս ուղարկելն ու այնտեղի եկեղեցում ձեռնադրվելու հնարավորություն ընձեռելն էր, քանի որ պատրիարքը շեշտում էր, թե Հայաստանի տիրակալը՝ որպես կայսեր հետ ամեն ինչում համաձայնել ջանացող բարեկամ, ցանկացել է, որ նոր կաթողիկոսը ձեռնադրվի Կոստանդնուպոլսում: Պատրիարքը այնուհետև գրում էր, որ Աշոտ Երկաթը պետք է ընտրի և Կոստանդնուպոլիս ուղարկի նոր կաթողիկոսի թեկնածուին, որը կծանոթանա «եկեղեցական իրավիճակին», իսկ այնուհետև կձեռնադրվի և կվերադառնա: Նրա կարծիքով՝ անհրաժեշտ է, որ Հայոց թագավորը ևս, քանի որ բարեկամ է կայսերը և բյուզանդական եկեղեցուն, պետք է նրանց հետ միավորված լինի ամեն ինչում՝ նաև դավանանքի հարցում: Ավելի բացահայտելով բյուզանդական արքունիքի և եկեղեցու ցանկությունները, կարծիք է հայտնում, որ ժամանակն է դավանանքի միօրինակության հասնելու երկու քրիստոնյա պետությունների միջև, ավելի որոշակի՝ հայերի կողմից Քաղկեդոնի դավանանքն ընդունելու, ուստի, հաշվի առնելով Աշոտ Երկաթի՝ իբրև թե համապատասխան ցանկության առկայությունը, շտապեցնում է կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս ուղարկելու հարցում[18]:

Նամակից բխող մյուս տեղեկությունն այն է, որ Հայաստանի տիրակալը կայսեր հետ բոլոր հարցերում համաձայնելու պատրաստակամությունից ելնելով է, որ Հայոց կաթողիկոսի նոր թեկնածուին ուղարկելու էր Կոստանդնուպոլիս՝ ձեռնադրություն ստանալու: Ըստ պատրիարքի՝ նա նախկինում կայսեր առաջ դրսևորել էր նույն խոհեմությունը և բարերարության արժանացել: Անկասկած, դա տեղի է ունեցել նրա՝ Կոստանդնուպոլսում գտնվելու ժամանակ՝ 915–916 թթ., երբ կայսրը Աշոտ Երկաթին օգնական զորք էր տվել թշնամիների դեմ մարտնչելու համար: Նամակից պարզ է, որ այդ ժամանակ Հայոց արքան համաձայնել էր կայսեր պահանջին՝ Քաղկեդոնի ժողովի դավանանքն ընդունելու և եկեղեցիների միության հարցում, և հենց այդ մասին է պատրիարքի հիշեցումը, թե նա, «խոհեմություն դրսևորելով, բարերարությունների է արժանացել», այսինքն՝ ստացել Բյուզանդիայի աջակցությունը թշնամիների դեմ պայքարելու համար: Եվ, քանի որ Աշոտ Երկաթը, կարիքից ելնելով, համաձայնել էր կայսեր պահանջին, նրանից ակնկալում էին, որ Բյուզանդիա կուղարկի կաթողիկոսի այնպիսի թեկնածուի, որը պատրաստ կլինի ընդունել Քաղկեդոնի դավանանքը և ձեռնադրվել Կոստանդնուպոլսում: Բայց դա կարող էր տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ

[18] Nicholas I Patriarch. 1973, 447–451.

թափուր դառնար Հայոց հայրապետական գահը: Ուստի, ամենայն հավանականությամբ, քանի որ Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին ողջ և առողջ էր, ապա պայման էր դրվել խոստումն իրականացնել նրա մահից հետո:

Գիտե՞ր այդ մասին Հովհաննես Դրասխանակերտցին՝ դժվար է ասել, հավանաբար՝ ոչ, քանի որ որևէ տեղեկություն այդ մասին չի հաղորդում, սակայն կռահում էր, որ Կոստանդնուպոլսում կարող են նման պահանջ դնել, որի պատճառով էլ 915 թ. չմեկնեց Բյուզանդիա՝ պատճառաբանելով, թե իրեն կարող էին կասկածել քաղկեդոնականությանը հարելու մեջ. «գուցէ գտցի ոք եւ ընդ ակամբ հայեսցի զանդ երթալն իմ՝ ի քաղկեդոնիտսն յարակցել ինձ համարեա»[19]: Կաթողիկոսը հավելում է, որ չի գնացել՝ տկարամիտներին չգայթակղելու համար[20]: Այստեղ պետք է հաշվի առնել նաև, որ այն սերն ու ակնածանքը, որ Հովհաննես Դրասխանակերտցին տածում էր Աշոտ Երկաթի նկատմամբ, վերջինիս՝ Բյուզանդիայից վերադառնալուց հետո էապես փոխվել էր[21], ինչը ևս կարող էր կապված լինել նշված պահանջի և դրա կատարման պատրաստակամության հետ:

Հույժ կարևոր է նամակի գրման թվականի ճշգրտումը, որը հնարավորություն կտա լույս սփռել այդ շրջանի իրադարձությունների և դրանց կարևոր մանրամասների վրա: Կոստանդնուպոլսի պատրիարքի գրության համար առաջարկվել են տարբեր թվականներ՝ երբեմն հաշվի առնելով նրա ու Հայոց կաթողիկոսի վախճանի թվականները: Նիկողայոս Միստիկոսը մահացել է 925 թ. մայիսի 15-ին, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ առավել ճշգրիտ թվագրման, նույն 925 թ.՝ 898 թ. սկսած 28 տարի աթոռակալելուց հետո[22]: Փաստորեն, նրանք երկուսն էլ մահացել են միևնույն թվականին:

Ասվածի հիմքով ստացվում է, որ Նիկողայոս Միստիկոսը մահացել է Հովհաննես Դրասխանակերտցուց ավելի ուշ, տեղեկացել է նրա մահվանը և գրել խնդրո առարկա գրությունը: Ն. Միստիկոսի նամակի շարադրման համար այլ՝ 912–913 թթ. առաջարկող Հ. Բարթիկյանը շեշտադրում է Հայոց թագավորության համար հենց 913 թվականի ճգնաժամային լինելը, իսկ մահացած կաթողիկոսի վերաբերյալ հիշատակությունը բացատրվում է կաթողիկոսի՝ իրականում ողջ լինելու, բայց, փաստացի, Ատրպատականում երկարատև բանտարկության պատճառով գործընթացներից դուրս մնալու իրողությամբ, որի պատճառով Հայոց Սմբատ I թագավորը մտորում էր նոր կաթողիկոս ընտրելու մասին[23]: Այսինքն՝ հետազոտողը ենթադրում է, որ նամակը գրվել է Հայոց թագավոր Սմբատ I-ին: Ռ. Ջենքինսը նամակի գրման թվական է համարում 922-ը՝ հույս հայտնելով, որ այն վերջնականապես կճշգրտեն հայ մասնագետները[24], իսկ Վ. Գրյումելը՝ 924-925 թթ.[25]: Պետք է նշել, որ նամակի՝ 925 թվականից ավելի վաղ թվագրողների վրա հատկապես ազդել է Հովհաննես Դրասխանակերտցու մահվան սխալ թվագրումը՝

[19] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 533–534:

[20] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 534:

[21] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 539–554:

[22] Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 85, Ա ն ե ց ի. 2014, 169, նաև՝ G a r s o y a n. 1997, 162; Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2020, № 1, 172–174:

[23] Բ ա ր թ ի կ յ ա ն. 1966, № 4, 254:

[24] J e n k i n s. 1961, V. 31, № 1, 80.

[25] Les Regestes. 1936, 197–198.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

929 կամ 930 թթ.[26], որի հետևանքով ստացվել էր, որ Աշոտ Երկաթի օրոք որևէ կաթողիկոս չի վախճանվել: Փաստորեն, հաշվի առնելով ասվածը, ճիշտ է Վ. Գրյումելի տեսակետը, քանի որ խիստ անհավանական է, դեռևս ողջ կրոնական առաջնորդին մահացած համարելով, նոր առաջնորդի ընտրելու մասին ենթադրությունը, իսկ Հովհաննես Դրասխանակերտցու մահվան ճշգրիտ թվագրումը 925 թ. լուծում է խնդիրը. նա մահացել է Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսից առաջ, և վերջինս դիմել է Աշոտ Երկաթին՝ նոր կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս ուղարկելու առաջարկով: Ըստ որում, սկզբում կայսրությունը փորձում էր լուծել Հայոց կաթողիկոսի՝ Կոստանդնուպոլսում ձեռնադրելու հարցը, որից հետո ճանապարհ էր բացվելու եկեղեցիների միության համար:

Վերոհիշյալը և պատրիարքի վերջին նամակի թվագրումն ու դրա բովանդակությունը հնարավորություն են տալիս վերականգնելու դեպքերի հետևյալ ընթացքը. Սմբատ I-ի թագավորության վերջին տարիներին՝ 909–912 թթ., անչափ ծանր վիճակում հայտնված և Ձկնավաճառում պարտություն կրած թագաժառանգ Աշոտը ապաստանել է Բյուզանդիայում՝ Լևոն VI-ի արքունիքում, որտեղից վերադառնալուց հետո ազատագրական հաջող կռիվներ է վարել: Հետագայում, երբ անհրաժեշտ է եղել է կայսրության աջակցությունը, արդեն թագավոր հռչակված Աշոտ Երկաթը 915 թ. կրկին, բայց այս անգամ արդեն պաշտոնապես, այցելել է Կոստանդնուպոլիս, որտեղ ճանաչվել են նրա գերակա իրավունքները Հայաստանում և շրջակա քրիստոնյա երկրներում: Նա Հայաստան է ժամանել բյուզանդական օգնական զորքով, որի դիմաց, ամենայն հավանականությամբ, խոստացել է զգալի զիջումներ եկեղեցական հարցերում, որոնք էլ ակնարկում էր պատրիարքն իր վերջին՝ 925 թ. նամակում: Այդ խոստումներին տեղյակ էր նաև Հայոց կաթողիկոսը, որը, ճիշտ է, կայսերն ուղղված իր 915 թ. նամակում նրան առաջարկում էր գրավել և իր հովանու ներքո վերցնել Հայաստանը[27], սակայն երբ կայսեր պատվիրակը 915 թ. եկել ու նրան Աշոտ Երկաթի հետ հրավիրել է Կոստանդնուպոլիս, չի համարձակվել այնտեղ գնալ՝ պատճառաբանելով քաղկեդոնականների հետ կապերի առումով իրեն ուղղվելիք մեղադրանքները: Ի դեպ, կաթողիկոսն ինքն է նշում հավանական մեղադրանքների բնույթը, այն է՝ քաղկեդոնականների հետ կապը, ինչը խոսում է վերոհիշյալ ենթադրությունների օգտին: Կարելի է կարծել, որ կաթողիկոսի նամակագրությունը և Աշոտ Երկաթի՝ եկեղեցիների միության վերաբերյալ խոստումներին տեղյակ լինելն ու դրանց չհակառակվելը եղել են դիվանագիտական հնարքներ՝ դժվարին իրավիճակում հայտնված երկիրը փրկելու ակնկալիքով: Իսկ հետագայում գրեթե միշտ սրված են եղել Հովհաննես Դրասխանակերտցու հարաբերությունները Աշոտ Երկաթի հետ, որի պատճառը, գուցե, հենց վերոհիշյալ խոստումներն էին, որոնք, ի դեպ, Կոստանդնուպոլսում չէին մոռացել:

Այս իրողությունը ցույց է տալիս, որ 925 թ. մայիսին վախճանված Նիկողայոս Միստիկոսն իրականում կարող էր լսած լինել Հովհաննես Դրասխանակերտցու մահվան մասին և գրել իր նամակ-պահանջագիրը Աշոտ Երկաթին: Իսկ այն, որ նա ինքն էլ շուտով մահացել էր, որևէ կերպ չէր կարող ազդել գործընթացի վրա. Հայաստանի «իշխանաց իշխանը», որ փաստորեն Աշոտ Երկաթն էր, խոստում էր տվել, և Բյուզանդիան պահանջելու էր խոստման կատարում, առավել ևս, որ

[26] Օ ր մ ա ն ե ա ն. 1912, 1064–1065, T e r-G h e w o n d y a n. 1976, 2, 135.

[27] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 530–531:

կայսրությունն անշեղորեն հզորանում էր, իսկ Աշոտ Երկաթը կրկին հայտնվել էր դժվարին իրավիճակում՝ Ատրպատականի ամիրայության դեմ պայքարի պատճառով:

Պետք է հավելել նաև, որ այն իրողությունը, որ Աշոտ Երկաթն ինքն էլ մարդիկ էր ուղարկել Կոստանդնուպոլիս՝ կաթողիկոսի մահվան լուրը տանելու և նոր կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս ուղարկելու առաջարկով, ցույց է տալիս, որ ինչպես 915 թ., այնպես էլ 925 թ. Աշոտ Երկաթը ծանր վիճակում էր և ուներ Բյուզանդիայի աջակցության կարիքը: Փաստորեն, այդ պատճառով էլ նա ինքն էր հիշեցնում իր խոստման և կայացված պայմանավորվածության մասին:

Խոստման կատարումը

Թեև Նիկողայոս Միստիկոսը մահացավ 925 թ. մայիսին, բայց կայսրության՝ եկեղեցիների միության պահանջը ի չիք չդարձավ: Խնդիրն այն է, որ որոշ փաստեր ցույց են տալիս, որ Աշոտ Երկաթը նոր կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս այնուամենայնիվ ուղարկել է, և տեղի են ունեցել Ն. Միստիկոսի նամակում նշված բոլոր միջոցառումները, այդ թվում՝ քաղկեդոնականությանը հաղորդակից լինելը, եկեղեցական իրավիճակին ծանոթությունը և ձեռնադրությունը: Այդ են հուշում Հովհաննես Դրասխանակերտցու հաջորդ կաթողիկոսի հետ կապված իրողությունները: Նրանից հետո մեկ տարի Հայոց կաթողիկոս է եղել Ստեփանոս II-ը (925–926), որին հայ պատմիչներից՝ նշված դեպքերին գրեթե ժամանակակից Ստեփանոս Տարոնեցին չի հիշատակում[28], կարծես նա չի էլ գահակալել: Նրան անվանապես են միայն հիշատակում Կիրակոս Գանձակեցին ու Սամվել Անեցին[29]: Դա խիստ տարօրինակ է, քանի որ նրա անվան հետ կապված որևէ բացասական տեղեկություն չկա, որ պատճառ դառնար նրան անտեսելու կամ չհիշատակելու: Մ. Օրմանյանը նրա խիստ կարճ՝ մեկ տարուց էլ պակաս աթոռակալելու պատճառ է համարում տարիքով առաջացած՝ ծեր լինելը[30]: Սակայն, կարելի է ենթադրել, որ նա կարող էր լինել Աշոտ Երկաթի ընտրած՝ Հայոց կաթողիկոսի հենց այն թեկնածուն, որին պատրիարքը կամեցել էր տեսնել Կոստանդնուպոլսում և ձեռնադրել: Տարոնեցու՝ Ստեփանոս II-ին «մոռանալը» կարելի է վերագրել այն իրողությանը, որ նա եղել է Կոստանդնուպոլսում՝ պատրաստ, ինչպես նշվում էր Նիկողայոս Միստիկոսի վերջին նամակում, ընդունելու քաղկեդոնական դավանանքը:

Սակայն արդեն Ստեփանոս II-ի աթոռակալության ժամանակ Աշոտ Երկաթը, ամենայն հավանականությամբ, սկսել է մտածել Կոստանդնուպոլսի պահանջը չկատարելու մասին և Ստեփանոս II-ին հեռացրել Հայոց եկեղեցու կառավարումից [927 թ. Ստեփանոս II-ին փոխարինել է այդուհետ 11 տարի աթոռակալած Թեոդորոսը (926–937)]: Դրա պատճառով սրվել են հարաբերությունները Հայաստանի և Բյուզանդիայի միջև, որին ի հետևանս՝ 927 թ. տեղի է ունեցել բյուզանդական զորքի արշավանքը Հայաստան[31]: Արդյունքում Աշոտ Երկաթը զենք բարձրացրեց Բյուզանդիայի դեմ՝ նրա բանակին հաղթականորեն դիմակայելով Դվինում՝ արաբ պաշտոնյա Նասիր ալ-Սուբուքիի հետ[32]:

[28] Տարաւնեցի. 2010, 748–749:

[29] Գանձակեցի. 1961, 85, Անեցի. 2014, 172:

[30] Օրմանեան. 1912, 1071:

[31] Constantine Porphyrogenitus. 1967, 209.

[32] Ibn al-Asir. 1987, 35–36; Տարաւնեցի. 2010, 748:

Վերոհիշյալ ենթադրության ապացույցն է այն, որ մինչև 927 թվականը հայ-բյուզանդական հարաբերություններում բարդություններ չեն եղել և միայն 927 թ., մինչ այժմ անհասկանալի դրդապատճառներով, բյուզանդական բանակը արշավել է Հայաստան: Ասվածը բացահայտում է արշավանքի շարժառիթը:

Ստեփանոս II-ի կարճ կառավարման և բյուզանդական արշավանքի վերաբերյալ կարելի է ենթադրել նաև դեպքերի այլ ընթացք: Հնարավոր է նաև, որ Ստեփանոս կաթողիկոսը պարզապես վախճանվել է, իսկ նրանից հետո կաթողիկոսի նոր թեկնածուն Կոստանդնուպոլիս չի ուղարկվել: Ի դեպ, կարելի է համարել, որ դեպի Դվինի արաբական ամիրայություն բյուզանդական արշավանքը Հայոց թագավորության դեմ անմիջականորեն ուղղված չէր, սակայն, ըստ էության, դա ոչ դաշնակցային, ավելին՝ թշնամական քայլ էր Հայոց թագավորության նկատմամբ, քանի որ բյուզանդական զորքի ռազմարշավը դեպի Դվին պետք է տեղի ունեցած լիներ նրա տարածքով, իսկ այն, որ Աշոտ Երկաթը պաշտպանում էր Դվինը, ցույց է տալիս, որ բյուզանդական արշավանքը նրա հետ համաձայնեցված չէր: Բայց առավել հավանական է, որ տեղի է ունեցել վերը նշված առաջին ընթացքը, քանի որ այն համապատասխանում էր Հայաստանը լիովին անկախացնելու Աշոտ Երկաթի նպատակին: Փաստ է, որ 927 թ. կար հայ-արաբական դաշինք՝ ընդդեմ նվաճողական քաղաքականություն որդեգրած Բյուզանդիայի: Արդյունքում, Աշոտ Երկաթին հաջողվեց սանձել Բյուզանդիայի ախորժակը և, միևնույն ժամանակ, պատճառ ունեցավ՝ վերջնականապես հրաժարվելու տրված խոստումից:

Եզրակացություն

Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901–907, 912–925)՝ 925 թ. գրությունը Հայոց թագավոր Աշոտ II Երկաթին (914–929) պարունակում է տեղեկատվական երկու շերտ: Դրանցից առաջինն այն է, որ Աշոտ Երկաթը Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու (898–925) մահից հետո՝ 925 թ., բանագնացներ է ուղարկել Բյուզանդիա՝ առաջարկելով ընդունել Հայոց կաթողիկոսի նոր թեկնածուին ու ձեռնադրելով՝ ուղարկել Հայաստան: Փաստորեն, Հայոց թագավորը կարծես առանց որևէ ճնշման պատրաստվում էր ընդունել մի բան, որին նախկինում հարյուրամյակներ շարունակ Բյուզանդիան չէր կարողացել հասնել հնարավոր բոլոր ճնշումներով: Դա վերագրելի է դժվարին պայմաններում հայտնվելու պատճառով նման զիջման գնով կայսրությունից օգնություն ակնկալելու խիստ հավանական իրողությանը: Սակայն օգնության դիմաց կայսրության պահանջը ոչ միայն Հայոց կաթողիկոսի ձեռնադրությունն էր Կոստանդնուպոլսում, այլև հայ-բյուզանդական եկեղեցական միությունն ընդհանրապես, ինչին էլ իր գրության մեջ պատրիարքն առաջարկում էր Աշոտին համաձայնել հաջորդիվ՝ կաթողիկոսի թեկնածուին ձեռնադրելուց հետո:

Կոստանդնուպոլսի պատրիարքի գրության տեղեկատվական երկրորդ շերտը վերաբերում էր նախկինում կատարված մի իրողության, երբ Աշոտ Երկաթը «խոհեմություն էր դրսևորել»՝ համաձայնելով կայսեր պահանջներին, և արժանացել նրա բարերարությանը: Այդ պատճառով պատրիարքը Հայոց թագավորին հիշեցնում էր այդ մասին՝ ակնկալելով, որ նա դարձյալ կհամաձայնի կայսեր պահանջներին, որոնք առնչվում էին կաթողիկոսի թեկնածուին Կոստանդնուպոլիս ուղարկելուն և հայ-բյուզանդական եկեղեցական միությանը: Աշոտ Երկաթի և Բյուզանդիայի կայսեր միայն մեկ ուղղակի շփում է հայտնի. այն տեղի է ունեցել Աշոտ Երկաթի՝ 915–916 թթ. Կոստանդնուպոլիս այցի ժամանակ: Այդ ժամանակ,

իրոք, Աշոտ Երկաթին այնտեղ մեծ պատիվներով էին ընդունել, իսկ վերադարձին թշնամիների դեմ պայքարելու համար օգնական զորք էին տրամադրել: Ամենայն հավանականությամբ, հենց այս բարերարության մասին էր 925 թ. հիշեցնում պատրիարքը՝ նշելով կայսեր հետ կրկին համաձայնելու անհրաժեշտության մասին: Դատելով նամակում արծարծված ակնկալիքների ու պահանջների բնույթից՝ այն ժամանակ օգնության դիմաց Աշոտ Երկաթից պահանջել էին զիջումներ եկեղեցադավանաբանական հարցերում, իսկ նա էլ ստիպված համաձայնել էր, սակայն ողջ էր Հովհաննես Դրասխանակերտցին, որը դեմ էր նշված հարցերում զիջումներին: Ուստի և հարկադրված սպասել էին նրա վախճանին:

Հովհաննես Դրասխանակերցու մահից հետո Աշոտ Երկաթին, փաստորեն, հիշեցրին իր խոստման մասին, կամ հենց ինքն էլ դա հիշեց, քանի որ Սևանի 924 թ. ճակատամարտից հետո դեռևս գտնվում էր դժվարին վիճակում և ուներ կայսրության օգնության կարիքը:

Արդյունքում Կոստանդնուպոլիս ուղարկվեց նոր կաթողիկոսի թեկնածուն՝ Ստեփանոսը՝ համապատասխան ընթացակարգը անցնելու և Հայոց կաթողիկոս ձեռնադրվելու համար: Վերջինս այնուհետև վերադարձավ ու բազմեց Հայոց հայրապետական աթոռին (925–926):

927 թ. ինչ-ինչ պայմաններում բյուզանդական բանակը արշավեց դեպի Դվին, և Հայոց թագավորը առիթ ստացավ հրաժարվելու իր խոստումից: Դրա հետևանքով Ստեփանոսը միայն մեկ տարի աթոռակալեց, իսկ հանգամանքները, որոնցում նա կաթողիկոս էր ձեռնադրվել, պատճառ դարձան, որ հայ պատմիչների երկերում նա կամ մոռացվի կամ անտեսվի:

Արման Եղիազարյան – պ. գ. դ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի և հարակից երկրների միջնադարի պատմություն և պատմական աշխարհագրություն, տարածաշրջանային քաղաքականություն, հայկական Սփյուռքի ձևավորում: Հեղինակ է 8, համահեղինակ՝ 5 մենագրության և շուրջ 130 հոդվածի:
ORCID: 0000-0002-2687-6209. armanyeghiazaryan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անանեան Պ. Փոտ պատրիարքի թղթակցութիւնը հայոց հետ. – «Բազմավէպ» (Վենետիկ), 1988, № 1–4, էջ 7–41 [Ananean P. Patriarch Pot's correspondence with the Armenians. – "Bazmave'p" (Venetik), 1988, № 1–4, pp. 7–41 (in Armenian)]:

Բարթիկյան Հ. 1966, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին. – ՊԲՀ, № 4, էջ 251–256 [Bartikyan H. 1966, Letters 101 and 139 of the Patriarch of Constantinople Nicholas the Mystic addressed to Yovhannēs Draskhanakertc ʻi and King Smbat I. – HPhJ, № 4, pp. 251–256 (in Armenian)]:

Եղիազարյան Ա. 2016, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 120 էջ [Yeghiazaryan A. 2016, Ashot Yerkat: King of Armenia. Yerevan, YSU Publishing House, 120 p. (in Armenian)]:

Եղիազարյան Ա. 2020, IX դ. վերջի և X դ. առաջին կեսի Ամենայն հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ. – Աստվածաբանական

և կրոնագիտական հոդվածների ժողովածու (Երևան), № 1, էջ 161–178 [Yeghiazaryan A. 2020, About the chronology of the reign of all Armenian Catholicoses of the end of the 9th century and the first half of the 10th century. – Collection of theological and religious articles (Yerevan), № 1, pp. 161–178 (in Armenian)]:

Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց Մեծաց. պատրաստեց Հ. Ն. Ակինեան. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 1968, № 1–3, էջ 65–100, № 4–6, էջ 129–156 [Letter of Patriarch Photios to Zachary, the Catholicos of the Armenians. Prepared by N. Akinyan. – "Handes Amsoreay" (Vienna), 1968, № 1–3, pp. 65–100; № 4–6, pp. 129–156 (in Armenian)]:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 428 էջ [Kirakos Gandzaketsi. 1961, History of Armenia, The text and preface were prepared by K. Melik-Ohanjanyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 428 p. (in Armenian)]:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց. 2010, Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր, Ժ դար. Պատմագրութիւն, Երկու հատորով, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 795 էջ [Yovhannēs Draskhanakertc'i's History of Armenia. 2010, Armenian Classical Authors, V. XI, 10th century, Historiography, In Two Books, Book I. Antelias-Lebanon, YSU Publishing House, 795 p. (in Armenian)]:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 504 էջ [Samuel Anetsi and Continuators. 2014, The Chronicle, Critical text, study and commentary by K. Matevosyan. Yerevan, "Nairi" Publishing House, 504 p. (in Armenian)]:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. 2010, Պատմութիւն տիեզերական, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար. Պատմագրութիւն, Երկու հատորով, Գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ [Step'anos Tarōnec'i Asoghik. 2010, The Universal History, Armenian Classical Authors, V. XV, 10th century, Historiography, in two books, Book II. Antelias-Lebanon, YSU Publishing House, 893 p. (in Armenian)]:

Վահանայ Նիկիայ եպիսկոպոսի բանք. – «Հանդէս ամսօրեայ», 1968, № 7–9, էջ 257–258 [Discourse of Vahan the Bishop of Nicaea. – "Handes Amsoreay", 1968, № 7–9, pp. 257–280 (in Armenian)]:

Օրմանեան Մ. 1912, Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կոստանդնուպոլիս, 850 էջ [Ormanean M. 1912, National History: the History of the Armenian Orthodox Church from beginning to the present day. Kostandnupolis, 850 p. (in Armenian)]:

Constantine Porphyrogenitus. 1967, De administrando imperio, Greek text edited by Gy. Moravcsik, English translation by R. J. H. Jenkins, new, revised edition, Dumbarton Oaks. Washington, 341 p.

Garsoyan N. 1997, The Independent Kingdoms of Medieval Armenia, in R. G. Hovhannisian, ed., The Armenian people from Ancient to Modern Times. V. I: The Dynastic Periods: from Antiquity to the Fourteenth Century. New York, 372 p.

Jenkins R. J. H. 1961. Letter 101 of the Patriarch Nicolas Mysticus. – "Byzantion" (Brussels), V. 31, № 1, pp. 75–80.

Les Regestes des Actes du Patriarcat de Constantinople. 1936, V. I: Les Actes des Patriarches. Fasc. II: Les Regestes de 715 à 1043. Par V, Grumel des Augustins de I'Assomption, Le Patriarcat Byzantin. Istanbul: Socii Assumptionistae Chalcedonenses, 294 p.

Nicolai. Constantinopolitani archiepiscopi, epistolæ. 1863, accedunt Eutychii Alexandrini, Basilii Neopatrensis, Basilii Cæsariensis, cognomento Minimi, Mosis Bar-Cephae, Theodori Daphnopatae, Nicophori Presbyteri CP., quae supersunt; accurante et denuo recognoscente J.-P. Migne, tomus unicus. Patrologiae cursus completus, Petrologia graeca, t. CXI, Lutetia Parisiorum: apud J.-P. Migne, 1236 p.

Nicholas I Patriarch of Constantinople Letters. 1973, Greek Text and English Translation by R. J. H. Jenkins and L. G. Westerink, Dumbarton Oaks texts, II. Washington, 631 p.

Ter-Ghewondyan A. 1976, The Arab Emirates in Bagratid Armenia. Lisbon, 244 p.

Ibn al-Asir. 1987, Al-Kāmil fī al-tārīkh (The Complete History), V. 7. Beirut, 520 p. (in Arabic).

ОБ ОДНОМ ВАЖНОМ ЭПИЗОДЕ В АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ЦЕРКОВНО-ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ
(первая чертверть X века)

АРМАН ЕГИАЗАРЯН

Резюме

Ключевые слова: армяно-византийские отношения, Ашот Еркат, союз церквей, конфессия, Ованес Драсханакертци, Николай Мистик, Константинопольский патриарх.

Письмо Константинопольского патриарха Николая Мистика (901–907, 912–925) армянскому царю Ашоту Еркату (914–929) от 925 года содержит важную информацию об армяно-византийских церковно-политических отношениях.

После смерти армянского католикоса Ованеса Драсханакертци (898–925) Ашот Еркат в 925 году отправил послов в Византию с целью принять нового кандидата на пост армянского католикоса, рукоположить его и отправить обратно в Армению. Таким образом, Ашот Еркат старался заручиться поддержкой Византии. Однако в обмен на помощь империя выдвигала требование о заключении армяно-византийского церковного союза в целом. В своем письме Константинопольский патриарх предложил Ашоту согласиться на это после рукоположения кандидата в Католикосы. В письме патриарх упоминает о мудром решении Ашота Ерката, ранее согласившегося выполнить требования императора и тем самым снискать его благосклонность. Исходя из этого прецедента, патриарх выражает надежду, что армянский царь откликнется на требование императора относительно армяно-византийского церковного союза. Известен

Պատմագրական-բանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

лишь один факт прямого контакта Ашота Ерката с византийским императором: он имел место в 915 году во время визита Ашота Ерката в Константинополь, где армянский царь был принят с большими почестями, а по возвращении ему была предоставлена вспомогательная армия для борьбы с врагами. Вероятно, именно об этом патриарх вспомнил в 925 году, отметив необходимость вновь договориться с императором. Из письма явствует, что Ашот Еркат вынужден был пойти на уступки в церковно-конфессиональных вопросах в обмен на помощь, но Ованес Драсханакертци был против уступок. После смерти Ованеса Драсханакертци Ашоту Еркату напомнили о его обещании, либо, возможно, он сам вспомнил о нем, поскольку нуждался в помощи империи.

В результате кандидат на пост Католикоса, Степанос II, был отправлен в Константинополь для прохождения соответствующей процедуры и рукоположения, после чего он вернулся и возглавил Армянский Католикосат (925–926).

В 927 году, в силу сложившейся ситуации, византийская армия двинулась на Двин, что дало возможность армянскому царю нарушить обещание. Отметим, что Степанос II являлся армянским католикосом в течение всего лишь одного года. Возможно, именно с обстоятельствами его рукоположения в католикосы связано то, что имя его либо было предано забвению, либо проигнорировано в армянской историографии.

Арман Егиазарян – д. и. н., профессор кафедры истории Армении Ереванского государственного университета. Научные интересы: средневековая история и историческая география Армении и соседних стран, региональная политика, формирование армянской диаспоры. Автор 8, соавтор 5 монографий и около 130 статей. ORCID: 0000-0002-2687-6209.
armanyeghiazaryan@ysu.am

ON AN IMPORTANT EPISODE IN ARMENIAN-BYZANTINE ECCLESIASTICAL AND POLITICAL RELATIONS
(the first quarter of the 10th century)

ARMAN YEGHIAZARYAN

Summary

Keywords: Armenian-Byzantine relations, Ashot Yerkat, union of churches, confession, Hovhannes Draskhanakertsi, Nicholas Mystikos, Patriarch of Constantinople.

The letter, dated 925, from Patriarch Nicholas Mystikos of Constantinople (901–907, 912–925) to the Armenian King Ashot Erkat (914–929) contains important information about Armenian-Byzantine ecclesiastical and political relations.

After the death of the Armenian Catholicos Hovhannes Draskhanakertsi (898–925), Ashot Erkat sent envoys to Byzantium in 925, offering to accept a new candidate for the post of Armenian Catholicos, ordain him, and send him back to Armenia. Thus, Ashot Erkat tried to secure the support of Byzantium.

However, in exchange for assistance, the empire demanded to conclude a general Armenian-Byzantine ecclesiastical union. In his letter, the Patriarch of Constantinople proposed Ashot to agree to this union after the ordination of the candidate to the Catholicos.

In the letter, the patriarch mentioned Ashot Yerkat's wise decision who had previously agreed to fulfill the emperor's demands and thereby gained his favor. Based on this precedent, the patriarch expresses hope that the Armenian king will respond to the emperor's demand for an Armenian-Byzantine ecclesiastical union. Only one fact of direct contact between Ashot Yerkat and the Byzantine emperor is known: it took place in 915 during Ashot Yerkat's visit to Constantinople, where the Armenian king was received with great honors, and upon his return he was provided with an relief army to fight his enemies. This is probably what the patriarch recalled in 925, noting the need to reach an agreement with the emperor again. The letter indicates that Ashot Yerkat was forced to make concessions on ecclesiastical and confessional issues in exchange for assistance, but Hovhannes Draskhanakerttsi was against such concessions. After the death of Hovhannes Draskhanakerttsi, Ashot Yerkat was reminded of his promise, or perhaps he himself remembered it because he needed the empire's help.

As a result, the candidate for the post of Catholicos, Stepanos II, was sent to Constantinople to undergo the appropriate procedure and ordination, after which he returned and headed the Armenian Catholicosate (925–926).

In 927, due to the current situation, the Byzantine army marched on Dvin, which gave the Armenian king the opportunity to break his promise. It is worth noting that Stepanos II served as Armenian Catholicos for only one year. Perhaps, because of the circumstances of his ordination as Catholicos, his name was either forgotten or ignored in the Armenian historiography.

Arman Yeghiazaryan – Doctor of Sciences (History), Professor in the Department of Armenian History at Yerevan State University. Scientific interests: Medieval history and historical geography of Armenia and neighboring countries, regional politics, formation of the Armenian Diaspora. Author of 8 and co-author of 5 monographs and about 130 articles. ORCID: 0000-0002-2687-6209.
armanyeghiazaryan@ysu.am

Պատմություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2